ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՐՏԻ 2025թվականի N 019

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-113-0031-0066-0069 ԾԱԾԿԱԳՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 08.04.2004թ. թիվ 443-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ_Ի կողմից հաստատված հողամասի հատակագիծը, Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ ,48-րդ, 62-րդ, 64-րդ կետերով.

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող ՀՀ կառավարության 08.04.2004թ. թիվ 443-Ն որոշմամբ համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0031-0066-0069 ծածկագրերով 0.033136 հա մակերեսով՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակությանհողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Հայաստանի Հանրապետության ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող 06-113-0031-0066-0069 ծածկագրերի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասին

տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Ֆիոլետովո համայնք 1-ին փողոց, N21/4 հողամաս:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ**

20 __ թ. _____ _____
գ.Ֆիոլետովո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՐՏԻ 2025թվականի N 020

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻԱՎՈՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով, անշարժ գույքի նկատմամբ իրավունքիների պետական գրանցման թիվ 13032025-06-0002 վկայականը, հիմք ընդունելով որակավորված չափագրող «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից չափագրված հատակագծերը.

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում ընդգրկված 06-113-0108-0213 ծածկագրի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրը ըստ հատակագծերի 0.71 հա, և 0.007 հա:

2. 06-113-0108-0213 ծածկագրի հողամասը առանձնացնել համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծերի և տալ սեփականության վկայականներ:

3. Որոշումը ենթակա է գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ**

20 __ թ. _____ _____
գ.Ֆիոլետովո